ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » հունվարի 2025 թվականի N: 16 - Ա ք. Գյումրի

ԱՌԱՔԵԼ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Էրեբունի» բժշկական կենտրոնի կողմից 2025 թվականի հունվարի 3-ին տրված ZX N 097747, «Ախուրիկի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2025 թվականի հունվարի 8-ին տրված ZZ N 244917 անաշխատունակության թերթիկները և Առաքել Մելիքյանի 2025 թվականի հունվարի 21-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Առաքել Մելիքյանին տրամադրված ամենամյա արձակուրդը երկարաձգել՝ 2025 թվականի հունվարի 22-ից 31-ը ներառյալ:

2. Առաքել Մելիքյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Անժիկ Սահակյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է